

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՍԽԱԼ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲԵԿԱՆԵԼՈՒ ԶԻՍՔ

ՎԱՐՅԵ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Դատարանի վճռի օրինականությունը պայմանավորված է ոչ միայն նյութական իրավունքի նորմերի ճիշտ ընտրությամբ և կիրառմամբ, այլև դրանց ճիշտ մեկնաբանությամբ: Ինչպես նշում է Տ. Ե. Աբովան, «նյութական իրավունքի նորմերը ոչ միշտ են միատեսակ ընկալվում դրանք կիրառող մարմինների կողմից, ինչը պայմանավորված է թե՛ սուբյեկտիվ (սխալ կամ թերի ընկալում), թե՛ օբյեկտիվ (իրավական նորմի երկիմաստություն, նորմի դիսպոզիցիայի ընդհանրական և երկընտրելի բնույթ և այլն) հանգամանքներով»¹:

Իրավական նորմի սխալ մեկնաբանությունն առկա է այն դեպքերում, երբ դատարանը, ճիշտ որակելով կողմերի իրավահարաբերությունը, սխալ է պարզաբանում վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմի բովանդակությունը, վերջինիս վերլուծությունից սխալ հետևություններ է անում կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ²: ԶԳՕ 149⁸ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը: Եթե դատարանը ճիշտ չի պարզում վիճելի իրավահարաբերության բնույթը (օրինակ՝ քաղաքացիաիրավական հարաբերությունները որակում է որպես աշխատանքային), ապա սխալ կորոշի նաև կիրառման ենթակա օրենքներն ու այլ իրավական ակտերը: Սակայն վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելը և կիրառման ենթակա օրենսդրությունը ճիշտ որոշելը բավարար չեն վճռի իրավականության համար. անհրաժեշտ է նաև, որ դատարանը ճիշտ մեկնաբանի իրավական նորմերը:

Իրավաբանական գրականության մեջ իրավական նորմի մեկնաբանում են համարում կիրառվող իրավական ակտի իրական նորմատիվ պատվիրանները գործնականում իրացնելու նպատակով դրանք պարզելուն ուղղված գործունեությունը³: «Իրավական ակտերի մասին» ԶԶ օրենքի 86 հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է այնտեղ առկա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշ-

¹ **Абова Т. Е.** Арбитражный процесс в СССР. Понятие, основные принципы. М., 1985, с. 89.

² Տե՛ս **Ս. Գ. Մեղրյան**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., 2010, էջ 83:

³ Տե՛ս **Лесницкая Л. Ф.** Пересмотр решения суда в кассационном порядке. М., 1974, էջ 155, **Боннер А. Т.** Принципы гражданского процессуального права (проблемы и перспективы) // Проблемы защиты прав и законных интересов граждан и организаций. Краснодар, 2002, էջ 5:

վի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոխվի դրա իմաստը (մաս 1): Եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները (մաս 2): Իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար:

Դատավարագիտությունում իրավական նորմի մեկնաբանման տարբեր եղանակներ են առանձնացնում: Գ. Ֆ. Շերշենևիչն առանձնացնում է նորմի մեկնաբանման քերականական, տրամաբանական, պատմական և համակարգային եղանակները⁴: Ա. Ֆ. Չերդանցևի կարծիքով՝ կարելի է առանձնացնել իրավական նորմը մեկնաբանելու առաջնային և երկրորդական եղանակներ: Առաջնային եղանակների շարքում հեղինակը նշում է քերականական, պատմական և համակարգային եղանակները, իսկ երկրորդական է համարում տրամաբանական, նպատակային կամ տելեոլոգիական, հատուկ-իրավաբանական և գործառույթային եղանակները⁵: Ի տարբերություն վերոնշյալ հեղինակների՝ Ե. Վ. Վասկովսկին գտնում է, որ գոյություն ունի իրավական նորմի մեկնաբանման երկու հիմնական ձև՝ բառային-իմաստային և իրական⁶:

Խնդիր չունենալով մերկայացնելու իրավունքի տեսության մեջ իրավական նորմերի մեկնաբանման եղանակները՝ հարկ է նշել, որ նորմի ճիշտ մեկնաբանումն իրավաչափ իրավակիրառությունն ապահովելու կարևորագույն պայմաններից է: Ընդ որում, գործնականում հատկապես բարդ է գնահատողական նորմերի մեկնաբանումը: Եթե հայեցողական լիազորությունների իրականացման պարագայում դատարանը սեփական հայեցողությամբ ընտրում է թույլատրելի վարքագծի կանոններից որևէ մեկը, ապա գնահատողական նորմերով որոշակի փաստերի կամ իրավական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև դրանց որակական գնահատական տալու իրավունքը վերապահվում են դատարանին: Այսպես, ՀՀ քաղ. օր. 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջելու հերքել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը: ՀՀ օրենսդրությունը նման տեղեկությունների ցանկ կամ շրջանակ չի սահմանում, և դրանք արատավորող որակելը յուրաքանչյուր դեպքով թողել է դատարանի հայեցողությանը: Կամ, ՀՀ քաղ. օր. 352 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունա-

⁴ Տե՛ս Շերշենևիչ Գ. Փ. *Общая теория права*. Т. 2. М., 1995, էջ 306-309:

⁵ Տե՛ս «Общая теория государства и права: Академический курс». Т. 2. М., 1998, էջ 323-325:

⁶ Տե՛ս Васьковский Ե. В. *Цивилистическая методология. Учение о толковании и применении гражданских законов*. М., 2002, էջ 367:

կում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում: Այսինքն՝ նյութական իրավունքի նորմերը երբեմն այնպիսի գնահատողական դրույթներ են պարունակում, որոնց մեկնաբանումն ու կիրառումն օրենքով կարող է իրականացվել դատարանի կողմից՝ հաշվի առնելով կոնկրետ քաղաքացիական գործի փաստական հանգամանքները: Մ. Ի. Բրագինսկին նշում է, որ անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել «բարեխղճություն», «ողջամտություն», «արդարություն» և վերացական բնույթի նման այլ հասկացությունների մեկնաբանությանն ու հիմնվել մեկնաբանման «ոսկյա կանոնի» վրա, այն է՝ օրենքում տեղ գտած բառերին և արտահայտություններին պետք է հաղորդել տարածական, գործածական նշանակություն⁷:

Մեր կարծիքով, հեղինակի կողմից նշված հասկացությունները գնահատողական կարելի է համարել միայն այն դեպքում, եթե օրենքը չի բացահայտում դրանց էությունը կամ չի սահմանում այդ իրավական հանգամանքները որոշելու չափանիշներ: Օրինակ՝ ՀՀ քաղ. օր. 275 հոդվածը սահմանում է բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջելու իրավունքը և միաժամանակ բացատրում «բարեխիղճ ձեռք բերող» հասկացությունը, որի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ, ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից պահանջելու տվյալ գույքը ... (մաս 1): Սրանից հետևում է, որ օրենքով սահմանվել են գույքը ձեռք բերողի բարեխղճությունը որոշելու չափանիշներ, սակայն դրանց կիրառումը դատարանը պետք է իրականացնի՝ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքներից ելնելով:

Կարող ենք ասել, որ վճռի օրինականությունը պայմանավորված է ոչ միայն դատարանի կողմից վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերի ճիշտ ընտրությամբ, այլև դրանց իմաստային և բովանդակային ճիշտ մեկնաբանությամբ: Նյութական իրավունքի նորմերը ճիշտ կիրառելու համար դատարանը պետք է հստակ բացահայտի դրանց բովանդակությունը՝ հաշվի առնելով առավել բարձր կամ հավասար իրավաբանական ուժով օժտված ակտերի պահանջները: Ընդ որում, իրավական նորմի ճիշտ մեկնաբանության համար անհրաժեշտ է ղեկավարվել կիրառական նշանակություն ունեցող և դատարանների համար պարտադիր իրավական ակտերով: Այսինքն՝ իրավական նորմը մեկնաբանելիս դատարանը պետք է հաշվի առնի և առաջնորդվի՝

- ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նույնաման կամ նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող քաղաքացիական գործերով նախկինում կայացված որոշումներով, որոնցում արտահայտված են բարձրագույն դատական ատյանի հիմնավորումները և կիրառման ենթակա օրենքի մեկնաբանությունը⁸,

⁷ Տե՛ս Брагинский М. И., Витрянский В. В. Договорное право. Книга первая. Общие положения. М., 2000, էջ 142:

⁸ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվում է «նույնաման» բառը, որը իր հերթին կարող է սխալ մեկնաբանության տեղիք տալ: Քաղաքացիական գործի փաստական հանգամանքները նույնական լինել չեն կարող, դրանք կարող են միմյանց նման լինել, ուստի մեր կողմից օգտագործվել է նաև «նմանատիպ» բառը:

- Եվրոպական դատարանի վճիռներով, որոնք մեկնաբանություններ են պարունակում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի՝ տվյալ գործով կիրառման ենթակա դրույթների վերաբերյալ,

- ՀՀ Սահմանադրական դատարանի այն որոշումներով, որոնցով իրավական դիրքորոշում է արտահայտվել տվյալ գործով կիրառման ենթակա իրավական նորմերի վերաբերյալ, տրվել է դրանց մեկնաբանությունը, ինչպես նաև այն որոշումներով, որոնցով լուծվել է այս կամ այն իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Այսպես, ՀՀ վերաքննիչ դատարանը բեկանել էր ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.07.2011թ. վճիռն այն պատճառաբանությամբ, որ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղ. օր. 172 և 280 հոդվածները, նշելով՝ որ ՀՀ քաղ. օր. 172 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքով: Նույն օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության: Առաջին ատյանի դատարանը սխալ էր մեկնաբանել վերոնշյալ նորմերը, քանի որ վերաքննիչ բողոք բերողը անշարժ գույքի սեփականատեր էր, համայնքի սեփականության իրավունքը նշված գույքի նկատմամբ որևէ հիմքով չէր վերացվել, և բողոքաբերը, սկսած 2002 թվականից, լիարժեք կառավարում, տիրապետում և օգտագործում էր սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, համայնքի շահերից ելնելով՝ ձեռնարկում միջոցներ դրա հետագա ճակատագիրը որոշելու համար, համայնքապետարանը չէր արել որևէ գրավոր հայտարարություն կամ կատարել այնպիսի գործողություն, որը վկայեր անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու կամ դրա տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության⁹: Ընդ որում, վերաքննիչ դատարանը նյութական իրավունքի նորմը մեկնաբանելիս հիմնվել էր վճռաբեկ դատարանի որոշումների վրա, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ ձեռքբերման վաղեմությունն օրենքով նախատեսված որոշակի ժամկետը լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց է: Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սե-

⁹ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԱԲԱԴ /0078/02/11 գործով 11.12.2011 թ. որոշում:

փական, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար այնպես, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Տիրապետման անընդմեջության մասով վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տասը տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կանքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից, կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն¹⁰:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն առաջին ատյանի դատարանի վճիռների բեկանման մասին իր որոշումների հիմքում բազմիցս դրել է թե՛ նյութական իրավունքի նորմերի խախտումները, թե՛ դրանց սխալ կիրառման հանգամանքը: Սակայն պետք է նշել, որ նյութական իրավունքի նորմի սխալ կիրառման և սխալ մեկնաբանության պարագայում մենք գործ ունենք իրավունքի նորմերի դասական խախտումների հետ: Մինչդեռ, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավունքի նորմի խախտումը, որպես կանոն, վերաքննիչ ատյանը կապում է օրենքի կամ այլ իրավական ակտի սխալ մեկնաբանման հետ: Օրինակ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը ԵԿԴ /0975/02/09 քաղաքացիական գործով 04.11.2001թ. որոշման մեջ ուղղակիորեն նշել է, որ առաջին ատյանի դատարանը սխալ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112, 1113 և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի պահանջները, թույլ է տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող նյութական իրավունքի նորմի խախտում¹¹:

ՀՀ ՔԴՕ 227 հոդվածը նյութական իրավունքի խախտումը կապում է ոչ միայն սխալ օրենքի և ՀՀ միջազգային պայմանագրի, այլև այլ իրավական ակտի սխալ մեկնաբանության հետ: Ընդ որում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածը սահմանում է իրավական ակտերի համակարգը՝ առանձնացնելով ՀՀ օրենսդրությունը (օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր), ՀՀ միջազգային պայմանագրերը, գերատեսչական ակտերը, տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը, դատական ակտերը, պետական այլ մարմինների իրավական ակտերը, պետական կամ համայնքային հիմնարկների իրավական ակտերը, իրավաբանական անձանց իրավական ակտերը, մինչդեռ քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև հարաբերությունները կարգավորվում են ինչպես վերոնշյալ իրավական ակտերով, այնպես էլ քաղաքացիաիրավական պայմանագրերի միջոցով: ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված է, որ դատարանը վեճը լուծելիս պարտավոր է առաջնորդվել նաև պայմա-

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի թիվ 3-1435 (ՎԴ) որոշումը: ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի թիվ /0324/02/08 որոշումը:

¹¹ Ընդ որում, առանձին դեպքերում վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի պարզաբանում գործի ելքի վրա ազդող նյութական իրավունքի նորմի խախտումը, մինչդեռ անհրաժեշտ է, որ որոշման մեջ հստակ նշվի, թե՛ դատարանը ինչի հետ է կապում նյութական իրավունքի խախտումը՝ իրավական նորմի սխալ մեկնաբանությամբ, թե՛ ոչ ճիշտ կիրառման (տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի ԵԿԴ - 3847/02/08 11.01.2011 թվականի որոշումը):

նագրով, քանի որ նույն օրենսգրքի 9 հոդվածը դատարանի կողմից օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառումը պայմանավորում է վիճելի իրավահարաբերությունն ուղղակիորեն կարգավորող օրենքի, կողմերի համաձայնության (այսինքն՝ պայմանագրի) կամ գործարար շրջանառության սովորույթի բացակայությամբ: Ընդ որում, հոդվածի բովանդակությունից բխում է, որ վիճելի իրավահարաբերության կարգավորման համար օրենքից (միջազգային պայմանագրերից) հետո նախապատվությունը տրվում է կողմերի համաձայնությանը: Բացի այդ, կողմերի համաձայնությունը որոշիչ նշանակություն ունի նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դիսպոզիտիվ նորմերով սահմանված դեպքերում իրավահարաբերության մասնակիցների թույլատրելի վարքագիծը որոշելու առումով¹²: Այսինքն՝ քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված դիսպոզիտիվ նորմերով նախատեսված դեպքերում դատարանը վեճը լուծում է օրենքի համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, կամ, այլ կերպ ասած, բացակայում է տվյալ հարցը կարգավորելու վերաբերյալ կողմերի համաձայնությունը: Ուստի, իրավակիրառ պրակտիկայում դատարանում քննության առարկա հանդիսացող վեճը լուծելու համար կարևորագույն նշանակություն ունի կողմերի միջև կնքված պայմանագիրը:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է քաղաքացիական իրավական նորմերի մեկնաբանման կանոնը, որը համապատասխանում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնին, սակայն օրենսգրքի 8 հոդվածի 2-րդ մասով նաև նախատեսվում է, որ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևով մեկնաբանման դեպքում նախապատվությունը տրվում է քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

Ըստ այդմ, անհրաժեշտ է պարզաբանել նաև դատարանների կողմից վեճը լուծելու նպատակով քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրերով նախատեսված դրույթների կիրառման և մեկնաբանման կանոնները, որոնց խախտումը կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման: Պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին): Եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը կողմերի համար սահմանում է այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա

¹² Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 410 հոդվածը թույլատրում է պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում բռնագանձել միայն տուժանքը, սակայն ոչ վնասները, կամ նույն օրենսգրքի 884 հոդվածի համաձայն՝ փոխառության պայմանագրի պայմանը չկատարելու, ինչպես նաև պայմանագրով նախատեսված պարտականությունները խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի փոխառուից պահանջելու վերադարձնել փոխառության գումարը և վճարել հասանելիք տոկոսները՝ պայմանագրով նախատեսված չափով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով և այլն:

(ՀՀ քաղ. օր., հոդվ. 438): Այսինքն՝ պայմանագրի և օրենքով սահմանված պարտադիր կանոնների միջև անհամապատասխանության կամ հակասության առկայության դեպքում դատարանը նախապատվությունը պետք է տա օրենքի կամ այլ իրավական ակտի դրույթներին: Հակառակ պարագայում, կարող ենք ասել, որ դատարանը թույլ է տալիս նյութական իրավունքի խախտում և *չի կիրառում անհրաժեշտ օրենքը կամ այլ իրավական ակտը*: Սակայն պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր (ՀՀ քաղ. օր., հոդվ. 437, մաս 1): Բացի այդ, կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր (խառը պայմանագիր): Խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասով կիրառվում են այն պայմանագրի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակվում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ խառը պայմանագրի էությունից: Փաստորեն, այն դեպքերում, երբ կողմերը կնքել են օրենքով չնախատեսված պայմանագիր, և բացակայում է կողմերի միջև ծագած իրավահարաբերությունը կարգավորող օրենքը, պայմանագիրը կամ կողմերի համաձայնությունը հանդիսանում է նյութական իրավահարաբերությունները կարգավորող հիմնական ակտ, որը վեճը լուծելիս դատարանի կողմից ենթակա է պարտադիր կիրառման: Ավելին, այն դեպքում, երբ դատարանը վեճը լուծելու համար չի կիրառում պայմանագիրը, այլ վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորում է գործարար շրջանառության սովորույթների, օրենքի կամ իրավունքի անալոգիայի հիման վրա, ապա մենք գործ ունենք նյութական իրավունքի դասական խախտման հետ, այսինքն՝ դատարանը չի կիրառել անհրաժեշտ իրավական դրույթը: Նյութական իրավունքի խախտման հիմքերի իրավակարգավորման գլխավոր թերությունն այն է, որ ՔԴՕ 227 հոդվածում օրենսդիրը, օգտագործելով «օրենք կամ իրավական ակտ» արտահայտությունը, անտեսել է ոչ միայն գործարար շրջանառության սովորույթները, այլև կողմերի միջև կնքված պայմանագրերը: Կարող ենք ասել, որ դատարանի կողմից պայմանագրի դրույթների կիրառումը նախատեսված է օրենքով, և այս կանոնից շեղումը կարելի է համարել նյութական իրավունքի (օրենքի) խախտում, սակայն այն դեպքերում, երբ կողմերը կնքում են օրենքով չնախատեսված պայմանագրեր, ապա դրանք որոշիչ նշանակություն են ձեռք բերում կողմերի միջև հարաբերությունների կարգավորման առումով, և իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության պայմաններում դրանցով սահմանված կանոններին պայմանագրի անհամապատասխանության հարցն ընդհանրապես վերանում է: Իհարկե պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պայմանագիրը պետք է համապատասխանի քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին:

Բացի այդ, դատական ակտի բեկանումը կարող է պայմանավորված լինել նաև պայմանագրի սխալ մեկնաբանությամբ: Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է առաջնորդվի այնտեղ առ-

կա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով (ՀՀ քաղ. օր., հոդվ. 447, մաս 1): Եթե պայմանագրի մեկնաբանման կանոնները հնարավորություն չեն տալիս որոշելու պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունները, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը: Ուստի, եթե դատարանը պայմանագիրը մեկնաբանում է վերոնշյալ կանոններին հակառակ, ապա թույլ է տալիս նյութական իրավունքի խախտում, որը կարող է ազդել գործի ելքի վրա, ուստի դատական ակտի բեկանման հիմք պետք է համարել նաև *դատարանի կողմից պայմանագրի սխալ մեկնաբանումը*:

Պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն (ՀՀ քաղ. օր., հոդվ. 436, մաս 1), ուստի դատարանը գործի քննությունն իրականացնելիս պետք է առաջնորդվի ինչպես օրենքով և այլ իրավական ակտերով, այնպես էլ կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթներով, որոնք հատկապես կարևորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դիսպոզիտիվ նորմերով: Կարող ենք ասել, որ վերաքննության կարգով դատական ակտը ենթակա է բեկանման, եթե դատարանն օրենքով նախատեսված դեպքերում խախտել կամ սխալ է կիրառել պայմանագրի դրույթները:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող են սահմանվել, փոփոխվել կամ դադարեցվել պայմանագրերով, **գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ 227 հոդվածում «օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ այլ իրավական ակտը» արտահայտությանը «գործարար շրջանառության սովորույթներ» բառակապակցությունից բացի պետք է ավելացնել «պայմանագիրը»** բառը, ինչը նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը սահմանող նորմն առավել կատարյալ կդարձնի և կվերացնի ներկայիս իրավակարգավորման բացը:

Բացի այդ, ՀՀ քաղ. օր. 9 հոդվածը դատարանի կողմից օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառումը պայմանավորում է վիճելի իրավահարաբերությունն ուղղակիորեն կարգավորող օրենքի, կողմերի համաձայնության, դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթների բացակայությամբ: Ուստի, դատարանի կողմից վեճը լուծելու նպատակով գործարար շրջանառության սովորույթների կիրառումն օրենքով նախատեսված դեպքերում ձեռք է բերում պարտադիր բնույթ, մինչդեռ, ՀՀ ՔԴՕ 12 հոդվածի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կիրառել գործարար շրջանառության սովորույթներ:

Գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ 12 հոդվածը պետք է վերաշարադրել և սահմանել, որ դատարանն օրենքով սահմանված դեպքերում կիրառում է գործարար շրջանառության սովորույթներ: Նման ձևակերպումը դատարանի կողմից օրենքով նախատեսված դեպքերում գործարար շրջանառության սովորույթների կիրառմանը պարտադիր բնույթ կհաղորդի, և վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու համար առավել որոշակի պայմաններ կապահովվի՝ սահմանափակելով ստորադաս դատական ատյանի կողմից դատական հայեցողության իրավունքի չարաշահումը: Ընդ որում, ՔԴՕ 12 հոդվածի ներկայիս իրավակարգավորման հետևանքով կարող է հակասություն առաջանալ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերի միջև այն առումով, որ դատավարության օրենքով դատարանի կողմից գործարար շրջանառության սովորույթների կիրառումը նախատեսված է որպես իրավունք կամ հայեցողական լիազորություն, մինչդեռ նյութական իրավունքի նորմերով դրանց կիրառումը կարող է պարտադիր բնույթ ունենալ: Մեր կարծիքով, այս պարագայում նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը որոշելու համար վերաքննիչ դատարանը պետք է առաջնորդվի նյութական իրավունքի նորմերով:

Իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման հիմքով առաջին ատյանի դատարանի դատական ակտերը բեկանելու հարցը որոշելու համար վերաքննիչ դատարանն առանձնահատուկ ուշադրության պետք է արժանացնի ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները: Ընդ որում, վերաքննության կարգով դատական ակտը բեկանելու պարագայում ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների իրավական ազդեցությունը կարելի է տարբեր կերպ մեկնաբանել:

Դատական քննության ընթացքում օրինականության սկզբունքն առաջին հերթին ենթադրում է, որ դատարանները գործի քննությունը պետք է իրականացնեն օրենքի տառին համապատասխան և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, ինչպես նաև վեճը լուծելիս իրավունքի տարբեր նորմերի միջև հակասության առկայության դեպքում պետք է առաջնորդվեն և նախապատվությունը տան առավել բարձր իրավաբանական ուժով օժտված ակտերին: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: Ուստի, եթե դատարանը վճռի հիմքում չի դրել տվյալ իրավահարաբերությունը կարգավորող սահմանադրաիրավական նորմը, վճռում չի հենվել դրա վրա և գործը լուծել է դրան հակառակ, կարող ենք ասել, որ թույլ է տվել իրավունքի խախտում և չի կիրառել համապատասխան իրավական նորմը: Այսինքն՝ այս դեպքում գործ ունենք դատական սխալի հետ, քանի որ դատարանը թույլ է տալիս գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի խախտում:

Սակայն օրենսդիրը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման շրջա-

նակներում չի դիտարկել, և ՀՀ ԶԴՕ 204³³ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե ՀՀ Սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ: Սրանից հետևում է, որ դատավարության օրենքով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը դատական ակտի վերանայման նոր հանգամանք է: Ընդ որում, ներկայիս իրավակարգավորման պայմաններում նոր հանգամանք է ինչպես Սահմանադրական դատարանի՝ օրենքը հակասահմանադրական ճանաչող որոշումը, այնպես էլ իրավակիրառման տեսանկյունից պարտադիր բոլոր այն որոշումները, որոնք օրենքի (իրավական նորմի) վերաբերյալ իրավական դիրքորոշում կամ մեկնաբանություն են պարունակում: Այսինքն՝ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը կամ մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ իրավակիրառումը կարելի է դիտարկել որպես իրավունքի խախտում, քանի որ դատարանն այս դեպքում սխալ է մեկնաբանել օրենքը: Հետևաբար, վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս ստորադաս դատարանի կողմից օրենքի նորմի մեկնաբանման իրավաչափությունը որոշելու համար պարտավոր է ղեկավարվել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներով:

Վերը ասվածը թույլ է տալիս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները համարել ինչպես դատական ակտի վերանայման հիմք, այսինքն՝ նոր հանգամանք, այնպես էլ այն դիտարկել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման համատեքստում: Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե ՀՀ Սահմանադրական դատարանն ինչ օրենք (նորմ) է հակասահմանադրական ճանաչել կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն բացահայտել է դրա սահմանադրաիրավական բովանդակությունը, կարող ենք դատարանի կողմից վերոնշյալ որոշումներին հակասող իրավակիրառումը համարել և՛ նյութական, և՛ դատավարական իրավունքի նորմի խախտում: Եթե Սահմանադրական դատարանի որոշումը վերաբերում է նյութական իրավունքի նորմի (օրենքի) գործողությանը, ապա իրավունքի խախտումը կլինի նյութական: Եթե Սահմանադրական դատարանի որոշումը վերաբերում է դատավարական իրավունքի նորմի (օրենքի) գործողությանը, ապա դատարանի կողմից սխալ իրավակիրառման դեպքում գործ կունենանք դատավարական իրավունքի նորմի խախտման հետ:

Հետևաբար, եթե դատարանը վճռի հիմքում դրել է ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենք, օրենքի նորմը մեկնաբանել է դրա սահմանադրաիրավական բովանդակությանը հակառակ, ապա ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին հակասող իրավակիրառումը կարող ենք համարել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Իրավական ակտերի համակարգում ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներն առանձնանում են հատուկ նշանակությամբ. դրանք ունեն նորմատիվ-իրավական բնույթ: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չհակասեն ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին: Ընդ որում, իրավունքի զարգացման ներկայիս պայմաններում գերակշռում է այն տեսակետը, որ Սահմանադրական դատարանի որոշումները պետք է համարել իրավունքի աղբյուր¹³: Հետևաբար, եթե իրավունքի աղբյուրների համակարգում առանձնացնում ենք նաև ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, ապա պարտավոր ենք օրենսդրական գնահատականի արժանացնել նաև այդ ակտերին չհամապատասխանող իրավակիրառությունը: Վ. Դ. Ջորկինը նշում է. «Նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու գործերով կայացված որոշումներն ունեն նորմատիվ բնույթ և ձեռք են բերում նախադեպային նշանակություն: Սահմանադրական դատարանը կարելի է իրավաստեղծ սուբյեկտ համարել, քանի որ օրենքի հակասահմանադրականությունը ճանաչող որոշումների հիման վրա դրանք զրկվում են իրենց իրավաբանական ուժից, իսկ այդ որոշումներն ունեն օրենքին բնորոշ գործողություն՝ ժամանակի ընթացքում, տարածության մեջ և ըստ անձանց շրջանակի: Հետևաբար, դրանք իրենց ընդհանուր գործողության բնույթով տարբերվում են մյուս դատական ակտերից»¹⁴:

Խնդրահարույց կարելի է համարել նաև ՀՀ ՔԴՕ 204³³ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը: Այսպես, դատարանը վեճը լուծում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, այսինքն՝ առաջին ատյանի դատարանը վճռի հիմքում կարող է դնել ինչպես օրենքներ, այնպես էլ ենթաօրենսդրական ակտեր (ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ նախագահի հրամանագրեր և կարգադրություններ, ՀՀ վարչապետի որոշումներ, գերատեսչական ակտեր, տեղական ինքնակառավարման մարմինների ակտեր և այլն): ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը կարող է նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին գործն ըստ էության լուծող ակտ կայացնել: Սրանից հետևում է, որ եթե ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում օրենքների սահմանադրականության հարցի վերաբերյալ, ապա վարչական դատարանը ՀՀ Սահմանադրական դատարանի ենթակայությանը չվերապահված գործերի մասով լուծում է ենթաօրենսդրական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխանության խնդիրը: Հարց է առաջանում. ի՞նչ գնահատական պետք է տալ այն դեպքերին, երբ դատարանը վճռի հիմքում դրել է օրենքին հակասող ենթաօրենսդրական ակտ, որն անվավեր է ճանաչվել վարչական դատարանի կողմից:

¹³ Ст'я Мкртумян А. Ю. Судебный прецедент в современном гражданском праве. Ер., 2009, էջ 63:

¹⁴ Зорькин В. Д. Прецедентный характер решений Конституционного суда Российской Федерации // «Журнал российского права», 2004, № 12, с. 4.

Դատարանի կողմից օրենքին հակասող ենթաօրենսդրական ակտի կիրառումը պետք է միանշանակորեն համարել նյութական իրավունքի խախտում, այն է՝ դատարանը կիրառել է այն իրավական ակտը (նորմը), որը չպետք է կիրառել: Սակայն դատավարության օրենքն առանց պատշաճ կարգավորման է թողել առաջին ատյանի դատարանի վճռի կամ վերաքննիչ դատարանի որոշման՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո վարչական դատարանի կողմից վճռի կամ որոշման հիմքում դրված նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու քաղաքացիադատավարական հետևանքները: Մինչդեռ, եթե օրենքով նոր հանգամանք է դիտարկվում օրենքը հակասահմանադրական և անվավեր ճանաչող, ինչպես նաև օրենքի նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող որոշումը, ապա նույն տրամաբանությամբ պետք է նոր հանգամանք դիտել նաև նորմատիվ իրավական ակտն օրենքին հակասելու հիմքով ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչող դատական ակտը (վճիռը):

Գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ 204³³ հոդվածի 1-ին մասը պետք է լրացնել հետևյալ դատողությամբ. **«Նոր հանգամանքները դատական ակտի վերանայման հիմք են, եթե ՀՀ վարչական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթն ամբողջությամբ կամ մասնակիորեն ճանաչել է անվավեր»:**

Քաղաքացիական դատավարության կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն առավելապես կապված է ինչպես նյութական իրավունքի նորմերի ճիշտ կիրառության, այնպես էլ մեկնաբանության հետ: Այս պարագայում վերադաս դատական ատյանների հիմնական առաքելությունը նյութական իրավունքի նորմերի սխալ մեկնաբանման հետևանքների վերացմանն ուղղված իրավական ներգործության միջոցների կիրառումն է, որն արդար դատաքննության իրավունքի ապահովման գործունե կառուցակարգ է:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք հավաստել. նյութական իրավունքի խախտման հիմքերի իրավակարգավորման գլխավոր թերությունն այն է, որ ՔԴՕ 227 հոդվածում օրենսդիրը, օգտագործելով «օրենք կամ այլ իրավական ակտ» արտահայտությունը, անտեսել է ոչ միայն գործարար շրջանառության սովորույթները, այլև կողմերի միջև կնքված պայմանագրերը: Ուստի, առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ 227 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սխալ է մեկնաբանել օրենքը, միջազգային պայմանագիրը, այլ իրավական ակտը, գործարար շրջանառության սովորույթը կամ պայմանագիրը», ինչը նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը սահմանող նորմն առավել կատարյալ կդարձնի և կվերացնի ներկայիս իրավակարգավորման բացը: Բացի այդ, կարծում ենք, որ եթե դատարանը վճռի հիմքում դրել է ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենք, և օրենքի նորմը մեկնաբանել է դրա սահմանադրաիրավական բովանդակությանը հակառակ, ապա ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին հակասող իրավակիրառումը կարող ենք համարել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

ВАГЕ ОГАНЕСЯН – *Неправильное истолкование норм материального права как основание для отмены судебного акта в апелляционном порядке.* – Защита субъективных прав в порядке гражданского судопроизводства преимущественно связана с правильным применением и истолкованием норм материального права. Основной задачей вышестоящих судебных инстанций является применение средств юридического воздействия, призванных устранить последствия неправильного истолкования норм материального права. Это действенный механизм, обеспечивающий право на справедливое судебное разбирательство. В статье разъясняются основные проблемы, обусловленные неправильным истолкованием норм материального права, которое даёт основание отменить судебный акт в гражданском процессе. Установлено, что главный недостаток правового урегулирования нарушений материального права заключается в следующем. Слова «закон или правовой акт» в 227-й статье ГПК РА не учитывают не только обычаи делового оборота, но и договоры, заключённые между сторонами. Предложено в 227-й статье к выражению «закон, международный договор Республики Армения или другой правовой акт», помимо «обычаев делового оборота», добавить слово «договор». Это усовершенствует норму и устранит недостаток существующего правового урегулирования. Кроме того, если в основе судебного решения лежит закон, противоречащий Конституции РА, то применение права, противоречащее решениям Конституционного суда, можно считать судебной ошибкой – нарушением нормы материального или процессуального права, которое подействовало на исход дела.

VANE HOVHANNISYAN – *The Incorrect Interpretation of Substantive Law Provisions as a Ground for the Appellate Review of the Judgment.* – The protection of rights in civil procedure is mostly linked to both the accurate implementation and interpretation of substantive law provisions. In these circumstances the main mission of superior judicial instances is the enforcement of remedies of legal impact aiming to abolish the consequences deriving from the incorrect interpretation of substantive law provisions and thus providing an effective mechanism of ensuring the right to fair trial.

The main issues on the incorrect interpretation of substantive law provisions as a ground for annulment of the judgment in civil process are discussed in the presented article. It turned out that the main shortcoming concerning the legal regulation of the grounds of substantive law violations is the expression “law or legal act” used by the legislator in the Article 227 of the Civil Code, thus ignoring not only the customs of commerce, but also the agreements concluded between the parties. It was suggested to add words “customs of commerce” and “agreements” to the expression “law, international treaty of RA and other legal acts” in the Article 227 of the Civil Code thus amending the discussed provision and eliminating the shortcoming of the legal regulation.

The author also stated that in cases when as a basis for making the decision the court has relied on a law contradicting the RA Constitution of RA, or interpreted the provision divergent to the constitutional content of the latter, the application of the law contradicting the resolutions of the Constitutional Court of RA can be deemed as a miscarriage of justice - as a breach of substantive or procedural law provisions, which has affected the final outcome of the case.